

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԾՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄՄԱ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

I—IV ԴԱՍԱՐԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂՎՈՄԱՏ
Տարրական գյուղացների վարչություն

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

I—IV ԴԱՍԱՐԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ

1987

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

1—4-րդ դասարանների հայոց լեզվի 1936 թվի հրատարակության ծրագիրը տառապում եր մի շարք թերություններով։ Վատ եր կաղմած առանձնապես 3—4-րդ դասարանների քերականության ծրագիրը, վորի մեջ խցկված եր բարձր դասարաններում անցնելիք նյութի մի զգալի մասը։

Այս հանգամանքը վնասում եր լեզվի ուսուցման գործին և հնարավորություն չեր տալիս ուսուցչին ծրագիրն անցնել վորակով, այնպես, վոր աշակերտությունը կարողանար յուրացնել անցած նյութը։

Ծրագրի մյուս բաժինները նույնպես թերի եյին, ձևակերպումներն անհասկանալի և խճողված, լեզուն՝ վատ, նյութը՝ պակասավոր։

Այս տարվա հրատարակության մեջ ըստ հնարավորին վերացված են այդ թերությունները։ Գրավոր և բանավոր խոսքի բաժինները խմբագրված են և ճշոված, 1-ին դասարանում ավելացված ե գրանանաչության ուսուցման բաժին, կարդալու բաժնում մտցված են վորոշ ուղղումներ։ Հիմնովին փոփոխված ե քերականության բաժինը, վորը թեթևացված ե ի հաշիվ այն անտեղի վոնցենտրիզմի, վոր կար նախորդ հրատարակության մեջ։

1—2-րդ դասարանների քերականության ծրագիրը խմբագրված ե իբրև նախաքերականական գիտելիքների ծրագիր։

3-րդ դասարանի ծրագրում թողնված ե նախադասության ուսումնասիրությունը, իսկ ձևաբանությունից՝ դոյականի և հոլովման ուսուցումը։

4-րդ դասարանի ծրագրում տրվում ե խոսքի մյուս մասերի պարզ ծանոթությունը (ի՞նչ ե ածականը, ի՞նչ ե դերանունը, ի՞նչ ե թվականը և այլն), բայի և խոնարհման ուսումնասիր



11-285519/1

կությունը, առանց սակայն վորեւ մանրամասնության, սպանեա բառակազմությունը:

Այս յեղանակով 4-րդ դասարանն ավարտող աշակերտներն անցնում են տարրական քերականությունը, առանց ծանրաբեռնվելու իրենց անմատչելի մանրամասնություններով, ժիանդամայնախապատրաստվելով 5-7-րդ դասարանների ծրագիրն անցնելու համար:

Նախորդ հրատարակության մեջ կար մի խոչոր թերություն են. դա ծրագրի բացատրականի պակասն եր: Այս տարրվա ծրագրում տրվում է ընդարձակ բացատրական, վոր մեծ ոժանդակություն կլինի մեր ուսուցչությանը:

Ծրագրի գեղագրության բաժինը մնացել և անփոփոխ:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Կ Ս Ն

Տարբական դպրոցի հայոց լեզվի դասավանդման նորասակներության կարգավոր, զբելու և իր միուն արտահայտելու սխանմատիկ գլուխելիքներ ու հաստատուն ունակություններ տալ աշակերտին:

Յուրաքանչյուր ուսման տարրվա ծրագրային նյութը դասավորված ե բառ հետեւյալ բաժինների. ա) կարգալ, բ) բանավոր խոսք, գ) զրարկոր խոսք, դ) քերականություն և ուղղագրություն (3-րդ և 4-րդ դասարաններում ք. և գ. բաժինները միացված են): 1-ին տարրվա համար տրվում է նաև գրածանաչության ուսուցման բաժին: Սակայն նյութի այսպիսի դասավորությունը ամենահին չի նշանակում, թե այս կարգով ել պետք ե ավանդվի մայրենի լեզուն: Բոլոր բաժինների պարագմունքները կապ ունեն իրար հետ: Խոսքի զարգացումը, վարպես աշխատանքի հիմնական բաժին, պետք ե տեղ ունենա լեզվի ավանդման բոլոր բաժիններում: Նույնը պետք ե ասել նաև կարդալու վերաբերյալ. կարգավոր հետ կապված են խոսքի ուսուցման աշխատանքի բազմաթիվ տեսակները, ինչպես և քերականության ուսուցման աշխատանքների զգալի մասը:

Ուսման պլանով հայոց լեզվին հատկացված ժամերը զանազան բաժինների վրա բաշխելիս՝ նկատի պետք ե ունենալ, վորցածքը դասարաններում ժամանակի մեծ մասը տրվելու յե կարգարւություն¹⁾, իսկ բարձր դասարաններում՝ համեմատական չափով բաշխելու յե կարգալու, խոսքի ուսուցման և քերականության վրա:

Ուսման առաջին տարրում պետք ե տալ կարգավոր և գրելու ակդրական ունակություններ, վորպես աշակերտի դրական լեզուն մշակելու անհրաժեշտ նախադրյաներ: Նախան դրամա-

1) ՏԵՇ դեղագրության առանձին ծրագրը:

նաչությանն անցնելը, անհրաժեշտ ե յերկու վեցորյակ նվիրել նախապատրաստության: Այդ շրջանում զրուցի և ուարաստ մունքների այլ ձեւերի միջոցով պետք ե վարժեցնել յերեխաներին բանալոր կերպով բառերը վանկերի բաժանել, վանկերը՝ հնչյունների, ապա ամբողջ բառերից անջատել այս կամ այն հնչյունը, ապա հաջորդական կերպով տրված հնչյուններից կազմել վանկեր և բառեր:

Որինակ. 1) Ի՞նչ հնչյուն ես լսում «ասա», «սուս», «շուն» բառերի սկզբում, վերջում կամ սկզբում ու վերջում:

2) Ի՞նչ հնչյուններից ե կազմված «օտուն» բառը:

3) Ի՞նչ բառ կկազմես ս ա ր հնչյուններից:

4) Ասա «ասք» բառի առաջին տառը, վերջին տառը, միջին տառը և այլն:

Դրան զուգընթաց աշակերտը նախապատրաստվում է գրելով՝ զանազան տեսակի գծեր քաշելով, նկարներ գծելով, նկարները մանրադեմով և այլն:

Գրաճանաչությունն անցնելիս պետք ե պահպանել կաղմությամբ հեշտ բառերից դեմք դժվարը (նախ բաց վանկերով՝ միավանի բառերով, ապա փակ վանկով և բազմավանի բառերով), ինչպես և արտասանությամբ ու գրությամբ հեշտ հնչատառերից դեմք դժվարն անցնելու սկզբունքը:

Ծրագրի գրավոր խոսքի բաժնում և գեղագրության ծրագրում նույնպես մատնանշված ե, վոր անհրաժեշտ ե գրելու նյութի սիստեմատիկ ընտրություն կատարել՝ հաջորդականություն պահպանելով տառերը գրելու ունակություն զարդացնելու մեջ:

Գրաճանաչության ուսուցումը պետք ե սկսել միաժամանակ՝ մ' տպագիր, և' ձեռագիր շրիֆտով:

Առաջին զանարանից սկսած՝ գրավոր աշխատանքների ժամանակ առանձին ուշադրություն պետք ե դարձնել թե՛ գեղադրության և թե՛ ուղղագրության վրա:

Առաջին ուշադրություն պետք ե դարձնել աշակերտի խոսքի զարգացման վրա: Դա վերաբերվում ե վոչ միայն խոսքի արտաքին (բարբառայնությունից զերծ արտասանության, առողմանության), այլև նրա բովանդակությանը:

Կարողանալ կապակցված կերպով հաղորդել իր գիտողությունները, ընդհանրացումներ ու հետեւություններ անել, նյութը չարագելիս հաջորդականություն պահպանել՝ ուսուցչի հար-

ցերի ոգնությամբ—ահա խոսքի զարդացման առաջին քայլերի իմադիրները: Այդ նպատակով ծրագրում բառապաշտիք հարցուացման, զրքի, նկարների միջոցով կատարվող աշխատանքներ կան, այլև առանձին զրուցներ՝ տանը կարդացած կամ ունկնդիմությունը զրքերի չուրջը: Անհրաժեշտ ե զպրոցականի մեջ ուսման դրած զրքերի չուրջը: Անհրաժեշտ առաջարկած կամ մեջ ուսման առաջին խոր որից հետաքրքրություն ու սեր զարդացնել դեպի դիքը:

Առաջին դասարանից սկսած գործնական վարժություններ են տրվում նախադասության վերաբերյալ:

Նախադասության մեջ բոլոր բառերն իմաստով իրար են կապված, ըստ վորում այդ կապը կարելի յի բացահայտել իմաստալից հարցերով («Հրաչիկն ընկերների հետ զբոսնում և պարտիկում»: Ո՞վ ե զբոսնում... «Հրաչիկը»: Հրաչիկն ի՞նչ ե անում... «Հրաչիկն զբոսնում ե»: Վո՞րեղ ե զբոսնում... «Պարտիկում»: Ո՞մ հետ ե զբոսնում... «Ընկերների հետ»):

Աշակերտներին նախադասությանը ծանոթացնելու համար բերված որինակները պետք ե լինեն միանդամայն պարզ, շեղումներին և բացառություններին կծանոթանան ալելի ուշ, պարզ նախադասությունը յուրացնելուց հետո:

Յերկրորդ դասարանում պետք ե ալելի ամրանան կարդալու, գրելու և բանալոր խոսքի զարդացման ունակությունները: Ուսման 2-րդ տարում տրվելու յեն նաև լուս կարդալու վարժություններ: Պետք ե ալելի արագ գրեն աշակերտները, բայց վոչ ի վնաս դրի վորակի:

Խոչոր նշանակություն տալով՝ ինքնուրույն ընթերցանության ունակությունների զարդացմանը, ծրագրում առաջին դասարանից սկսած տեղ ե տրված արտադրոցական ընթերցանությանը: Յերկրորդ դասարանում սկսելով յերեխաներին մատչելի աշխատանքներից (ով ի՞նչ դիւք ե կարդացել, կամ ի՞նչ են կարդացել նրա համար մեծերը), հաջորդ դասարաններում այդ աշխատանքները բարդանալու յեն. աշակերտները պետք ե կարողանան զարգացակից բնորություն կատարել:

Այդ աշխատանքն ուսուցիչը պետք ե դեկավարի յերկու ուղղությամբ:

1) Յելնելով աշակերտների պատրաստականության աստիճանից և հարցանիրությունից, նա պետք ե ողնի նրանց ընտրելու անհրաժեշտ դիրքը ընթերցանության համար:

2) Նա պետք ե զրուցի միջոցով ողնի աշակերտներին, վոր

Նրանք հասկանան իրենց կարդացած զրքերը . կարդացած գրքերի վերաբերյալ զրույցը կարելի յէ կաղմակերպել նաև դասարանում , հասկապես այն ժամանակ , յերբ բոլոր աշակերտները նույն հարցի չուրջը կարդացել են մի կամ մի շարք (տարրեր) զրքեր :

Բանավոր և դրավոր խոսքի բաժնում դետեզված են զանազան վարժություններ , վորոնք նպաստում են բանավոր և ինքնուրույն դրավոր խոսքի ունակությունների զարդացմանը :

Քերականության պարագմունքների ընթացքում աշակերտներին պետք է զուտ գործնական ճանապարհով սովորեցնել առարկայի անունը , առարկայի հատկության , թիվի և գործողության անունը , առանց հիշատակելու քերականական տերմիններ :

Այս դասարանում աշակերտները բառը վանկերի և հնչյունների բաժնելու ունակություն են ձեռք բերում , բայց վորում նրանք զաղափար են կաղմում ձայնավոր և բաղաձայն հնչյունների և բառի շեշտի մասին : Այս դիտելիքներով աշակերտները ձեռք կբերեն կանոնավոր ու ծիչու զրելու ունակություն : Մասնավորապես բառը վանկերի բաժնելու ունակության հետ և կապված տողաղարձ անելու ունակությունը :

Այս դասարանում ծանոթություն և արվում զրույցամբ և արտասանությամբ տարբերվող բառերի մասին և արտադրության միջոցով վարժություն և կատարվում նրանց չուրջը (վարդ , մարդ , չող և այլն) :

Աւաջին դասարանում հիմնականում խոչոր ու չաղրություն դարձնելով սիսալների կանխման վրա , այնուամենայնիվ կատարած ուղղագրական սիսալի վրա տարբեր թանաքով պետք է գրել ձիշտը : Այսու դասարաններում ուսուցիչը մեծ մասմբ պետք է սիսալ տառն ընդուծի և սիսալի վրա զծի , ապա վերեսում ձիշտը զրի , իսկ բարձր դասարաններում անցած կանոնի շուրջը սիսալ կատարելու գեղքում , կարելի յէ յերեմն ընդուծել սիսալները , վորպեսզի իրենք՝ աշակերտները կարողանան ուղղել այդ սիսալները , բայց վորում պետք է ընդուծել փոք թե մի տառը , այլ բառի այն ամբողջ մասը , վորի մեջ սիսալ և թույլ արված (արմատ , նախածանց , վերջապարություն) :

Սիսալն ուղղված բառը աշակերտը մի քանի անգամ պետք է զրի իր տեսքում :

Յերրորդ դասարանում (ինչպես և հաջորդ դասարանում) քերականությանը և ուղղագրությանը մեծ տեղ է տրված , վորովհետեւ այս դասարանում կարդալու , զրելու և բանավոր խոսքի

քի զարգացման ունակությունների համար հաստատում հիմք ե դրվում :

Այս դասարանում աշակերտները ծանոթանում են կապակցված խոսք կազմելու յեղանակներին (նախադասության ուսմունք) , ինչպես և գոյականին :

Սկսելով ծանոթանալ գոյականին , հարկավոր և դրա համար ոգտադրծել այնպիսի բառեր , վորոնք առարկա յէն ցույդ տալիս (մարդ , զիբք , գրիչ , տուն և այլն) : Զուգահեռ կերպով պետք է ցույց տալ , վոր առարկա ցույց ավող այդ բառերը պատասխանում են ո՞վ կամ ի՞նչ հարցերին և ապա անմիջապես վարժեցնել աշակերտներին այդ բառերի փոփոխությանը՝ ո՞վ , ո՞մ կամ ի՞նչ , ինչի՞ և մյուս հարցերով : Հետագայում աշակերտները ծանոթանում են այնպիսի բառերի հետ , վորոնք ցույց են տալիս առարկաների խմբեր (աղավնին , սարյակը , ծիծեռնակը—թռչուններ են) , պարզել աշակերտներին , վոր այդ բառերը նույնպես պատասխանում են ո՞վ , ի՞նչ հարցերին և փոփոխվում են մյուս հարցերին համապատասխան :

Պետք է սովորեցնել , վոր նախադասության մեջ գոյականը լինում է յենթակա , կամ լրացում . յուրաքանչյուր գոյական անցնելուց առաջ նախ պարզաբանվում է նրա բովանդակությունը և ապա մատնանշվում , վոր նա կարող է պատասխանել ո՞վ կամ ի՞նչ , ո՞ւմ կամ ինչի՞ և այլ հարցերի և փոփոխվել այդ հարցերով : Այս դասարանում պետք է անցնել նաև հասարակ և հատուկ անունները , գոյականի թիվը և հոլովները : Հոլովները պետք է անցնել նախադասությունների միջոցով :

Չորրորդ դասարանում ուսումնասիրվում են խոսքի մյուս մասեր՝ ածական , թվական , դերանուն , բայց , մակրայ , կապ , չաղիկապ և ձայնարկություն : Յուրաքանչյուրի մասին զաղափարը տալիս նշվում է նրա հիմնական հատկանիշը (որինատիկանությունը) ածականը տարբերակայի հատկությունը ցույց ավող բառ և , թվականը առարկայի թիվը ցույց տվող բառ և , բայց առարկայի զրծողությունը կամ զրությունը ցույց տվող բառ և այլն) :

Այս դասարանում ավանդվում է նաև բայի խոնարհումը հիմնական ժամանակներով՝ ներկա , անցյալ և սպառնի : Ժամանակը վարչելիս աշակերտը պետք է յեղնի իմաստից : Անցյալ և սպառնի ժամանակների զանական տեսակները նշելու կարիք չկա : Բոլոր ապառնի ժամանակները պետք է կոչվեն «ապառնի» , բոլոր տեսակի անցյալ ժամանակները՝ «անցյալ» :

Յերրորդ և չորրորդ դասարաններում պետք է ավանդել ուղղագրության բոլոր կանոնները սխտեմատիկաբար. այս բաժնում պետք է լինի և՝ «յ» ձայնակապի, և՝ «ը» ձայնավորի, և՝ բաղաձայնների, և՝ յերկշնչյունների, և՝ ածանցների ուղղագրությունը:

Չորրորդ դասարանն ավարտում և ամրապնդում է նախորդ դասարանում աշակերտի ստացած ունակությունները: Արագացվում է կարդալու, ինչպես և գրելու տեմպը, ավելի մեծ տեղ է տրվում ինքնուրույն գրավոր աշխատանքներին:

Ինքնուրույն գրավոր աշխատանքներն ուսուցիչը դեկամարում է յերկու ձեռվ. 1) աշակերտներին անմիջական ցուցումներ և ողնություն և ցույց տալիս պլանները մշակելու դորում, խոռքի շարադրման աշխատանքում գժվարությունների հանդիպելիս և մտքերն արտահայտելու համար լեզվական համապատասխան միջոցներ ընտրելու գործում, և 2) ուղղում է աշակերտների գրավորները, բազմակողմանի քննության յենթարկելով այդ գրավոր աշխատանքները՝ բովանդակության, պլանի, նյութը կամոնավոր շարադրելու համար լեզվական միջոցները հաջող ընտրելու տեսակետից և այլն:

Պետք է ողտադործել նաև ինքնուրույն աշխատանքի տարրեր ձեւերը բարձր, մասամբ և ցածր դասարաններում (զանազան ձեւի ուղղագրական աշխատանքներ և առաջադրություններ, «լուռ կարդալու» առաջադրություններ, կարդացածի, ինչպես և նկարի կապակցությամբ մտքերը գրավոր արտահայտելու աշխատանքներ, կամ ինքնուրույն գրավոր աշխատանքներ): Վորովեսդի այդ աշխատանքները չինհեն պարզապես մերենական աշխատանքներ, որա համար այդ աշխատանքները պետք է մանրակիր կերպով ձևակերպվեն հրահանդի մեջ: Այսպիս որինակ՝ «լուռ կարդալու» նյութ տալով, ուսուցիչը պետք է հրահանգը ձևակերպի միանդամայն կոնկրետ հարցերի միջոցով, այնպիսի հարցերի միջոցով, վորոնք նպատակ ունեն աջակցելու նյութի բովանդակության այս կամ այն մասը շարադրելուն և կամ նպատակ ունեն բացատրելու լեզվական միջոցների ընտրությունը՝ տեքստը շարադրելու ընթացքում (ինչպիսի բառեր ու գարձանքներ և ընդունել հեղինակը տեքստը շարադրելու, այս կամ այն կողմը հազորդելու համար և այլն):

Կարդացած նյութը շարադրելու կամ նկարով աշխատելու համար առաջադրություն հանձնարարելիս ուսուցիչը պետք է

Ըստորեն հաշվի առնի, թե ինքնուրույն աշխատանքներին համացված ժամերին ինչը կարող է գլուխ բերվել, իսկ առաջադրություններն այնպիս ձեւակերպվի, վոր նրանց հարցերին պատասխաննելը վորչ մի գժվարություն չստեղծվի:

Պետք է բոլոր միջոցները ձեռք առնելին, վոր դրավոր աշխատանքների հրահանգները կատարելիս կանխվեն աշակերտների ուղղագրական սխալները (տալ ուղեցուցյանը, հիշեցնել, վաղացածելու դեմքում բացատրություն ստանալու համար աշակերտները դիմեն ուսուցչին և այլն): Նույն միջոցները պետք է կիրառվեն նաև ուղղագրության հրահանգների դեպքում, որին նաև չտալ աշխատանք այնպիսի կանոնների չուրջը, վորոնք չեն անցնել աշակերտները:

Պետք է խուսափել ինքնուրույն աշխատանքի բոլոր առաջադրությունները մեքենայորեն կատարել տալուց (որինակ՝ ամենուն դասին մեքենայական արտադրություն և այլն), անհրաժեշտ ե, վոր աշխատանքի մեջ ինքնուրույն ստեղծագործակրներ մամենու մտցվի:

Վերջապես, թե ինքնուրույն և թե ուսուցչի ողնությամբ կատարվող բոլոր վարժությունների (կարդալու, գրելու, քերականական աշխատանքների) համար պետք է ընտրել բարակակալից, աշակերտին հետաքրքրող և հասարակական-դաստիարակչական նշանակություն ունեցող նյութ:

Մ Ր Ա Գ Ի Բ

Ա Ռ Ա Զ Ի Ն Դ Ա Ս Ա Բ Ա Ր Ա Յ Ն

Առաջին կիսամյակ

Գ Ր Ա Ճ Ա Ն Ա Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն

Կարգալու և դրելու ուսուցման նախապատրաստություն առաջին յերկու վեցորյակում (յոթնորյակում)։ մատչելի դրույց կենցաղային, սոցիալական, դպրոցական, բնության և այլ յերեսությունների շուրջը։ ընտելացում դպրոցական միջավայրին, աշակերտական պարտականությունների կատարմանը։ ուշադիր լսելու և հրահանգը կատարելու ունակության մշակում։ նախադասության միջից բանավոր կերպով բառն անջատելու, բառը վանկերի և հնչյունների բաժանելու ունակության մշակում։ ընտելացնել դրելու տեխնիկային (կանոնավոր նստել, դրիչ ու մատիտ բոնել և այլն)։ տառերի տարրերը պարունակող դրաֆիկ-նկարչական վարժություններ։

Գրանիաձնություն։ դրելու ուսուցումը կարգալու ուսուցման զուգընթաց։ դրված բառեր կարգալ, վերլուծել վանկերի և հնչյունների։ դրեր ճանաչել։ դրերի և վանկերի միացմամբ կարգալ բառեր, կարճ նախապատրություններ թե՛ տապակիր և թե՛ ձեռագիր տեքստից։ Գրերի ուսուցման ընթացքում պահպաննել հետևյալ հաջորդականությունը։ ճայնավորներ և չփական բաղաձայններ, ճայնորդներ, պայմուցիկ բաղաձայններ։ խուսափել այնպիսի բառերից, վորոնց մեջ բաղաձայններն այս կամ այն կերպ փոխում են հնչումը։

Կ Ա Բ Դ Ա Լ

Առաջնորդ բաց թողնելու, առանց կրկնությունների և սխալների, պարզ և դրական արտասանությամբ կարգալ դասադրում կամ նկարների տակ դրած բառերը, պարզ և մատչելի բառերից կաղմաց համառոտ նախապատրությունները, դրա-

ռախուակի վրա ուսուցչի դրած բառերն ու կարճ նախադասությունները, դասագրքի հոդվածները և իր ձեռագիրը։

Վարժեցնել կարդացած փոքրիկ ու պարզ հոդվածների բովանդակության շուրջը տրված հարցերին պատասխանել և ապա բովանդակությունը պատմել։ Անդիբ անել մանկական փոքրիկ ու մատչելի վոտանավորներ դասագրքից։

Գ Ր Ա Վ Ո Ր Լ Խ Ո Ս Ա Ֆ

Սովորեցնել կանոնավոր, մաքուր, պարզ և վոչ չատ խոշոր (միջին մասը 5 մմ, իսկ ամբողջ տառը 17 մմ բարձրությամբ, 75⁰ թեքությամբ) տառերով գրել 4 տողանի թեք գծերով տետրում։ Առանձին ուշագրություն դարձնել գեղագրության վրա (միանման տարրերի հավասար մեծություն, հեռավորություն, տառերի համաչափություն, միրինակ թեքություն-զուղահեռություն և այլն)։

Դրել կարճ բառեր և կարճ նախապատրություններ՝ պահպանելով հեշտից դժվարին անցնելու աստիճաններ կարգը։ Առանձին տառեր գրելու վարժություններ։ Պահպանել գեղագրության ծրագրում մատնանշված զուրության հիմնական համաչափությունները և մյուս կանոնները¹⁾։

Բ Ա Յ Ա Վ Ո Ր Լ Խ Ո Ս Ա Ֆ

1. Յերեխաններին վարժեցնել բարձր, պարզ, առանց շտապելու խոսելուն։ Առաջին իսկ որից սկսել դրական լեզվով աստիճանաբար խոսել սովորեցնելու աշխատանքը։ Ուղղել յերեխայի խոսքի պակասաւալոր կողմերը՝ վերջավորություններ կուլ տալլը, խոսելու ընթացքում անկանոն շնչելը, շտապելուց վորոշ հնչյուններ սխալ արտասանելլը, կակագելլը և այլն։

Ծանոթություն—կոսքի պակասաւալոր կողմերն ուղղելու աշխատանքներն սկսվում են յերեխայի դպրոցական կյանքի հենց առաջին որից և շարունակում են տարրական դպրոցի ուսման վողջ ընթացքում։

2. Բառապաշտի հարստացման աշխատանք։ առարկանների պարզ խմբավորում (կենդանիներ, բույսեր, աշխատանքի գործիքներ, դպրոցական և անային գործածության իրեր և այլն)։ Գործողության անունները (ի՞նչ է անում քարտաշը—Քար և

¹⁾ ՏԵ՛ս գեղագրության ծրագիրը։

տաշում : Ի՞նչ ե տեսում ներկարարը :—Ներկում ե) : Առարկաները ճանաչելն ըստ գույնի (այսուն սպիտակ ե, զբաժախտակը սև ե և այլն), ըստ համի (քացախը թթու յե, շաքարը քաղցր ե և այլն), ըստ հոտի (դուրեկան և անախորժ) և այլն : Առարկաների համեմատությունն ըստ հատկանիշների՝ բարձր—ցածր, յերկար—կարճ, հաստ—քարակ, լայն—նեղ և այլն :

3. Շրջապատող իրականության դիտողությունների հետ կապված (յերեխաների կյանքի, նրանց աշխատանքի, մեծերի աշխատանքի, դպրոցի, բնության, առորյա կյանքի և այլն) գանազան հարցերին կարճ և լրիվ նախադասություններով պատասխաններ տալու ունակություն : Շրջապատող իրականության վերաբերմամբ կատարած դիտողությունները բանավոր և կապակցված պատմելու ունակություն) : Ուրիշի խոռքը (փոքրիկ պատմվածք կամ բացատրություն) լսելու ունակություն :

4. Նկարներով աշխատանք . նկարի բովանդակության մասին տրված հարցերին պատասխաններու ունակություն (որինակ՝ կոնչ ե նկարված : Պատասխանի տեսակները . Շունը վագում ե, յերեխաները ծաղիկ են բաղում) :

ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄԹԱԿ

Կ Ա Բ Գ Ա Լ

Առանց բառեր բաց թողնելու, առանց աղալաղումների և առանց կրկնությունների կանոնավոր կարդալ դասագրքի հողվածները, վոտանավորները, ինչպես և ձեռագիր տեքստը :

Պատասխանել կարդացածի բովանդակությանը վերաբերող ամենապարզ հարցերին : Ուսուցչի ղեկավարությամբ դերերով կարդալ դասագրքի համապատասխան հողվածներն ու վոտանավորները : Անգիր անել վոտանավորներ դասագրքից և «Հոկտեմբերիկ» ամսագրից :

Գիտենալ գրքի հետ վարպելու և գիրքը պահպանելու կանոնները :

Գ Բ Ա Վ Ո Ր Խ Խ Ո Ւ Ա Ֆ

Ուսուցչի հսկողությամբ կարողանալ առանց տառեր և բառեր բաց թողնելու, առանց տառերը խառնելու, ամբողջական բառերով (բայց վոչ տառ-տառ), գրչով գրել պարզ բառեր և նախադասություններ : Կարողանալ գրատաթուակից և դաշտագոր-

քից վոչ թե առանձին տառերով, այլ ամբողջությամբ արտադրել բառեր և կարճ նախադասություններ, զետեղելով բաց թողած բառերը :

Ուսուցչի ոգնությամբ նախապատրաստվելուց հետո, կարողանալ ուղղագրական տեսակետից ճիշտ գրել ուսուցչի թելադրած բառերը և համառոտ նախադասությունները : Այս աշխատանքի ժամանակի պետք ե պահպանել հեշտից դժվարին անցնելու սկզբունքը, խուսափել այնպիսի բառերից, վորոնց դրությունը չի համապատասխանում արտասանությանը : Բառերը բաց թողած նախադասություններ արտագրել՝ լրացնել բաց թողած բառերը, վորոնք զետեղված կլինեն տեքստի տակ : Կարողանալ գրել իր անունն ու ազգանունը : Տարեվերջին կարողանալ մեկ կամ մի քանի ինքնուրույն նախադասություն կրցմել և գրել :

Բ Ա Ա Վ Ո Ր Խ Խ Ո Ւ Ա Ֆ

Դասի ժամանակ կարողանալ լսել ուրիշի խոռքը, ձայնինդրել և համառոտ կերպով իր միտքն արտահայտել :

Բառապաշտի հարատացման աշխատանք . սովորել թուչուների, գաղանների, ընտանի կենդանիների և այլն անունները, խմբավորել այդ ըստ հիմնական հատկանիշների (վայրի, ընտանի, չվող, ձմեռող թուչուններ և այլն) . տալ այն նյութի անունը, վորից պատրաստված և առարկան (որինակ՝ բաժակը ապակուց ե, սեղանը փայտից ե, կոչիկը կաչուց ե) :

Նկարներով աշխատանք . նկարների տակը գրելու համար պարզ նախադասություն կազմել, կամ համապատասխան բառ գտնել (որինակ՝ «մուկն ու կատուն», «գայլն ու աղվեսը», «կատուն խաղում ե» և այլն) : Պատմել միենառույն անցքի տարբեր մոմենտները ներկայացնող պարզ նկարների բովանդակությունը :

Քերականական և ուղղագրական նախական գիտելիքներ

1. Աշակերտների կանոնավոր ու լրիվ պատասխանն ոգտագործել վորպես պարզ նախադասության որինակ : Սուլորեցնել պարզ համառոտ նախադասություն կազմել : Ուշադրություն դարձնել ավարտված նախադասության ճիշտ առողջանության (դարպարի) վրա :

2. Ճամանակել արտօնության բոլոր նշանները . ճամանակել մյուս բոլոր կետերը : Կարողանալ գրել ուսուցչի կազմած պարզ նախադասությունները . նախադասություններն սկսել մեծատառով և վերջում վերջակետ դնել :

3. Կարողանալ վոչ շատ ընդարձակ նախագասությունները բառերի բաժանել, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների (դաշտափար հնչյունի և տառի մասին) :

4. Գիտենալ մեծատառի գործածության հետեւալ պարզադույն դեպքերը. վերնադիրն սկսվում է մեծատառով, նոր գրությունն սկսվում է մեծատառով, վերջակետից հետո բառն սկսվում է մեծատառով, մարդկանց անուններն ու ազգանունները և առանձին կենդանիներին տրված անուններն սկսվում են մեծատառով:

5. Կարողանալ տողադարձ կատարել շատ հեշտ բառերը բաժանելով վանկերի. դիտենալ, վոր գրելիս լուսանցքը չի կարելի անցնել, վոր տողադարձ անելիս տողադարձի նշան պետք է դնել, վոր միավանի բառերը չի կարելի տողադարձ անել:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՐՄՆ

Կ ա ր դ ա լ

1. Բարձր, առանց յերդելու և սահուն կարդալ դասադրքի տպագիր հոգվածները, պահպանելով առողջապահության և կետադրության կանոնները (վերջակետ, հարցական և բացականչական նշաններ): Իր ընկերների ձեռագիր տեքստը կարդարու վարժություն: Դերբոով կարդարու վարժություն: Անդիր սովորել վոտանալորներ:

2. Հարցերի ոգնությամբ քննարկել կարդացածը: Մատչելի հոգվածները պարզ մասերի բաժանել և վերնագրեր դնել: Մասերի բովանդակությունը պատմել և ապա ամբողջացնել: Կարդացածից անհամականալի բառեր կամ նախադասություններ առանձացնելու և ուսուցչին հարցնելու սովորություն ձեռք բերել: Պատմել կարդացածի պարզ բովանդակությունը:

3. Լուռ ընթերցանություն՝ կատարելով ուսուցչի հանձնարարությունները (դտնել տրված հարցերի պատասխանը և այլն):

4. Ծանոթություն տալ գրքի մասին: Գրքի անունը, հեղինակի անունը, ցանկը, եջերի թիվը, տեքստերի վերնագիրը և այլն:

5. Ծանկական գեղարվեստական մատչելի պարզ պատմվածքներ ու կարճ վոտանալորներ կարդալ: Զբույց կարդացած գրքի մասին (իր՝ աշակերտի կարդացած գրքի, կամ այն գրքի մասին, վոր ուրիշներն են կարդացել նրա համար):

Գ ր ա վ ո ր ի խ ո ս ե ք

1. Տիրապետել ճիշտ նստելու, գրիչը կանոնավոր բոնելու և թանաքի հետ կանոնավոր վարվելու հմտությանը:

Ավելի արագ (համեմատած ուսման առաջին տարրի հետ), պարզ և գեղեցիկ գրել չորս տողանի թեք գծեր չունեցող տետրում, 75⁰ թեքությամբ (տառերի միջին մասը 4 մմ, իսկ ամբողջ տառը 14 մմ բարձրությամբ):

Գրել առանց բառերի դասավորությունը փոփոխելու, առանց տառեր բաց թողնելու, առանց ջնջումների, ճիշտ տողադարձ կատարելով:

2. Դասագրքի հոգվածները, աշակերտի տպագորությունները, ապրումներն ու դիտողությունները մշակել և դարձնել գիտակցական արտագրության, դիտողաբացատրական թելադրության և ուղղագրական տեսակետից մշակված շատ կարծագրության նյութ:

3. Կարողանալ կատարած աշխատանքների որագիր կազմել, 5-6 հարցերից բաղկացած անկետա լրացնել, պարզ հասցե և կարծ նամակ դրել (ուղղագրական տեսակետից դժվար բառերը նախորոք զրատախտակի վրա գրելուց և բացատրելուց հետո): Ուսուցչի ոգնությամբ դասարանում պատրի թերթի համար փոքրիկ հոգվածներ և տեղեկություններ մշակել:

4. Ուսուցչի զեկավարությամբ գրավոր շարադրել նկարների համարությունը բովանդակությունը. գրատախտակին գրված հարցերին գրավոր պատասխաններ տալով՝ հոգվածի վերաբերյալ պարզ կատարած շարադրություն գրել: Արտագրել ուսուցչի ոգնությամբ դասարանում մշակված հոգվածի պլանը:

Բ ա ն ա վ ո ր ի խ ո ս ե ք

1. Կարողանալ աշխատանքի, խաղի և հանձնարարության կատարման մասին համառոտ պատմել (ո՞վ եր աշխատում, ի՞նչ եր անում, ի՞նչ արդյունք ստացվեց): Կարողանալ իր կամ իր ընկերների կյանքից զանազան անցքերի և դիպվածների մասին կապակցված պատմել: Կարողանալ համառոտ տեղեկություններ հաղորդել, հարցեր տալ, տրված հարցերին պատասխանել:

2. Դասարանում մասնակցել տեսածի, լսածի, կարդացածի և դիպածի քննարկմանը:

3. Նկարներով աշխատանք. Արքում յեղած կամ ուսուցչի տված հարցերի ոգնությամբ պատմել նկարի բովանդակությու-

նը: Դասագրքում լողունզներ, նախադասությամներ կամ վուտանափրներ գտնել նկարի տակ գրելու համար:

4. Առաջիկաների անունները խմբավորելն ըստ այդ առարկաների մեծության (որինակ՝ գետ-գետակ, անու-առվակ): Սովորեցնել առարկաների մասերի անունները (տուն, հիմք, պատեր, տանիք և այլն): Հեշտությամբ համեմատել տարրեր առարկաներ իրենց բնորոշ հատկություններով (որինակ՝ կանաչ տերև և կարմիր վարդ):

5. Կազմել սեփական բառարան՝ ոգտագործելով դասարանի պատերին փակցրած և դասագրքի նկարները:

Հականիշ բառեր կազմելու վարժություն (մեծ-փոքր, աղմուկ-լուսություն): Կարողանալ ոգտագործել դասագրքի բառաշուցակը:

Քերականական և ուղղագրական նախնական գիտելիքներ

1. Կրկնել և խորացնել առաջին դասարանում անցածը: Շարունակել պարզ նախադասություն կազմելու վարժությունները: Կարողանալ նախադասություններից պատմվածք կազմել: Կարողանալ նախադասության մեջ գտնել մտքով իրար հետ կապ ունեցող բառերը: Կարողանալ լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը թե՛ բանալոր, թե՛ պրավոր. որինակ՝ Յես (ի՞նչ եմ անում)..... տուն: Աշակերտները առկրում են..... (վո՞րտեղ): Աշակերտները վերադարձն: (վո՞րտեղից) և այլն:

2. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկա. դանել շրջապատող կամ ծանոթ առարկաների, կենդանիների, թռչունների, ձկների, միջատների և այլ անուններ: Հարցեր տալ, վորոնք վերաբերում են այդ առարկաների անուններին (ո՞վ, ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞ն, ո՞ւմ, ինչի՞ն, ի՞նչ, ումի՞ց, ինչի՞ց, ումո՞վ, ինչո՞վ, ո՞ւմ մեջ, ինչո՞ւմ):

3. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի հատկություն, և իմասնալ, թե նրանք ի՞նչ հարցի յեն պատասխանում (ի՞նչպիսի, վո՞րպիսի): Հատկություն ցույց տվող բառեր դանել և կապել այն առարկաների անվան հետ, վորոնց վերաբերում են այդ բառերը: Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք թիվ են ցույց տալիս:

4. Նախադասության մեջ գտնել այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի գործողություն, տալով հետեւյալ հարցե-

քը. — Ի՞նչ ե անում, ի՞նչ արեց, ի՞նչ ե անելու և այլն: Գտնել այնպիսի բառեր, վորոնք ցույց են տալիս առարկայի գործողությունը:

5. Շարունակել առաջին դասարանում սովորած մեծատառի գործածության դեպքերը. զիտենալ, վոր քաղաքների, գյուղերի, գետերի, լեռների և փողոցների անունները նույնական գրվում են մեծատառով: Վարժվել ոժանդակ բայց անջատ դրելուն, բայց բառերի հետ միացած կարդալուն:

6. Վանկ և բառ, տողագրած շարունակել բառերը վանկերի բաժանելու վարժությունները. դրելիս բառերը տողագրած անել, բաժանելով վանկերի:

7. Հնչյուններ և տառ. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ. գիտենալ տառերի այբբենական կարգը. «Ա»-ը վորպես սղագրության նշան զիտենալ, վոր «Ա» հնչանը մեծատառ ձև չունի, գրվում է յերեք տառերով՝ «ՅԵՎ»: Պարզել այն դեպքերը, յերբ գրությունն ու արտասանությունը չեն համապատասխանում իրար: «Բ» ձայնավորը տողագրածի ժամանակ:

8. Հողնակի երև և ներ մասնիկները: Ուղղագրական վարժություններ ակ, իկ, իչ, ուհի և նման ածանցներ ունեցող բառերով (որինակ՝ տնակ, փոքրիկ, զրիչ, սրբիչ, ուսուցչուիկ և այլն): Կարողանալ ողտվել թե՛ դասագրքի և թե՛ պատի ուղղագրական բառացուցակներից:

9. Առօգանության նշաններ. գիտենալ հարցականի, բացականչականի և չեշտի նշանակությունը բանավոր խոսքի և գրության մեջ, ինչպես և նրանց գործածության պարզագույն դեպքը:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ

Կ ա ր դ ա լ ա լ

1. Բարձրածայն, առողանության կանոնների համապատասխան, արտահայտիչ և վարժ կարդալ դասագրքի հոդվածներն ու վոտանավորները: Ուսուցչի ցուցումով ինքնուրուցյան կարդալ «Հոկտեմբերիկ» մանկական հանդեսն ու մանկական գրքեր: Կարգացածի շուրջը դրույց ումենալ (ի՞նչ գիրք ե ընտրել աշակերտը, ի՞նչ գիրք և հանձնարարում կարդալ ընկերութը, վո՞ր գիրքն ե դրեն դուր յեկել): Կարդացած գրքում նկարագրած վորեւ դիպ-

վածը համառոտ կերպով պատմել։ Կարդալ դյուրընթեռնելիք ձեռագրեր։

2. Ծանոթություն ուալ լրագրի մասին (անում, տիրաժ, հրատարակչություն, վայր, տարեթիվ և այլն)։

3. Լուր կարդալու ունակության զարգացում։ լուր կարդալով նախապատճառակից բարձրածայն, որինակելի կարդալուն և հողվածի բովանդակության դասարանական քննությանը։ Դերերով կարդալ։ Կարողանալ հողվածը մասերի բաժանել և կապակցված հաղորդել նրանց բովանդակությունը։ Կազմել հողվածի ծրագիրն ըստ հարցերի։ Տրված հարցերին հողվածում համապատասխան հատվածներ գտնել։ Հողվածում գտնել այնպիսի հատվածներ, վորոնք համապատասխանում են ուսուցչի արտահայտած այս կամ այն մտքին։ Անդիր անել վրտանակորներ։

4. Կարողանալ նշել և հարցնել անհասկանալի, անծանոթ բառերն ու արտահայտությունները։

5. Ծանոթացնել, թե արձակ ու չափածու դրվածքներն ինչո՞վ են տարբերվում միմյանցից։

Բանավոր և գրավոր խոսք

1. Կարողանալ հաջորդականությամբ, հիմնականում վուճնչ բաց չթողնելով, ուսուցչի կամ դասարանի կազմած պլանով հաղորդում անել։ Կարողանալ նախապես կազմած ծրագրով վորեն յերեսության նկարագրել (հացահատիկի հավաք, բամբակահավաք, տրակտորի, կամացիչի աշխատանք, բնության յերեսության դեպքեր։ և այլն)։

2. Պատմել կարդացած դրվի համառոտ բովանդակությունը, իր ստացած տպակորություններից պատի լրագրի հաղողած կամ թղթակցություն կազմել։ Կարողանալ պատմել դիտած մանկական կինոֆիլմի կամ մանկական թատրոնի առանձին տեսարանների բովանդակությունը։ Կատարած աշխատանքի վերաբերյալ դրավոր փոքրիկ շարադրություն կազմել։ Կարդացած հողվածի բովանդակությունը պատմել լրիվ կերպով, համառոտելով և ընդարձակելով։

3. Կարողանալ նամակ, ստացական, պարզ հարցաթերթ լրացնել։

4. Նկարներով աշխատանք։ դրամոր կերպով շարադրել մի նկարի, կամ մի թեմայով միացած նկարների բովանդակությունը։ Ստեղծագործական լրացում կատարել նկարի վերաբերյալ

(յերեխաները խոսում և գրում են այն մասին, թե ինչ է նախորդել նկարում պատկերված դեպքին, կամ ինչ պետք է, իրենց կարծիքով, հաջորդի պատկերված դեպքին)։

5. Պատմողական բնույթի ամենապարզ թեմաների շուրջը փոքրիկ շարադրություններ գրել (դեպքեր իր կամ ընկերոջ, ազգականի կյանքից դեպքեր, վորոնց մասնակից և յեղել աշակերտը և այլն)։

6. Գրավոր պատասխանել նախապես մշակած պարզ հարցերին, նախապես կաղմած գրավոր ծրագրով շարադրություն գրել։ Քերականական գրավոր վարժություններ կատարել։

7. Ուսուցչի ողնությամբ, մի քանի պարզ նախադասություններով գրի առնել ողերեկութարանական յերեսություններն ու որպատասանքները և որպատասանքները կազմել։

8. Բառապաշարի հարստացման աշխատանիք։ նույնանիշ, հականիշ, համանիշ և համանուն բառեր։ Ուսուցչի ողնությամբ գտնել բառերի նշանակության տարբերությունները՝ այդ բառերով նախադասություններ կազմելու միջոցով։ Յուրաքանչյուր դասին սովորած բառերի բառատեսքը կազմել դեղագրության պահանջների համաձայն։ Գրել յերեք տողանի տետրում (տառի միջին մասը 3 մմ., իսկ ամբողջ բարձրությունը 11 մմ.)։ Շարունակել ընթեռնելի և մաքուր գրելու վարժություններ։

Քերականություն, ուղղագրաւթյուն և կետադրաւթյուն

1. Նախադասության սահմանումը։ Նախադասության վերլուծությունն ըստ բովանդակության և բառերի կապակցության (ի՞նչ են ցույց տալիս յենթական ու ստորոգյալը, պարագացուց այլող բառերը, վորոշիչը, հատկացուցիչը և այլն)։ Նախադասության գլխավոր անդամները՝ յենթական և ստորոգյալ։ ի՞նչ հարցերի յեն պատասխանում նախադասության դիմավոր անդամները։

2. Համառոտ նախադասություններ կազմելու վարժություն։ Յենթակայի և ստորոգյալի համաձայնությունը դեմքով և թվով։

3. Ծանոթություն տալ ընդարձակ նախադասության մասին։ Գաղափար լրացումների մասին։ Ծանոթություն հարցական, բացականչական, պատմողական և հրամայական նախադասություններին։ Համադաս լրացումներ ունիցող նախադասություններ, մեկից ավելի յենթական և մեկից ավելի ստորոգյալ ունեցող նախադասություններ։ Կետադրություն։ Տարրական և գործնական ծանոթություն տալ չափերների և անջատման դժվարությունը։

ԿՃԵՐԸ ԿՄՐԾԱԾԱՎԾՅԱՆ ՄԱՏԻՆ : ԾԱՆՐԾՈՎԾՅՈՒՄ ԲԱԳՄԱԿԵՐՈՒ ԿԱՐ-
ԾԱԾԱՎԾՅԱՆԸ :

4. ՃԱՆԱՀԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՎԾՅԱՆ ՄԵջ ԱՌԱՐԿԱ ցույց տվող բա-
ռերը (իրեր, մարդիկ, յերևոյթներ և այլն) : ԳՐԵԼ, թե ի՞նչ
հարցերի յեն պատասխանում դրանք (ո՞վ, ի՞նչ և այլն) : Գա-
ղափար գոյական անվան մասին (տերմինը սովորեցնելով)՝ իբ-
րև առարկա ցույց տվող բառի : Հատուկ և հասարակ անուն :
Մեծաառի գործածության բոլոր գեղքերը :

Գոյականների թիվը : Յեղակի և հոգնակի : Վորոշող հոգը՝
«ը» կամ «ն» և նրա գործածությունը : Դիտել գոյականի ձևերն՝
իբրև յենթակա և իբրև լրացում գործածվելու ժամանակ (դու-
ռը բացվեց : Վահանը բացեց դուռը) :

5. Գաղափար ուղղական հոլովի մասին՝ յենթակայի կա-
պակցությամբ : Նախադասությունների ողնությամբ հարցերով
սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական, հայցա-
կան, բացառական, գործիքական և ներգոյական), բացատրելով
յուրաքանչյուրի եյական առանձնահատկությունը :

6. Կարողանալ ոգտիկ ուղղագրական ավելի մեծ բառա-
յուցակներից և բառագրքույկներից : Յ ձայնակապի գործածու-
թյան վերաբերյալ ուղղագրական վարժություններ (այս, այս,
այու և այլն) : Յով յերկշնչուն ունեցող բառերի ուղղագրու-
թյունը (յա, յու, յո և այլն) : Իա, իե, իո, իու կապակցու-
թյունների ուղղագրությունը (Մարիամ, պիոներ, Դանիել, միու-
թյուն) : Յ ձայնավորը բառասկզբում և սկ, սպ, սր, սփ, զգ,
շտ, զբ կապակցություններից առաջ. յ ձայնավորը բառավեր-
յում : Ոժանդակ բայց գլորբայից անջատ գրելու վարժություն :

ԶՈՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՐՆ

Կարդալ

1. Բարձրաձայն կարդալ տպագիր և ընթեռնելի ձեռագիր
տեքստերը : Կարդալու ժամանակ մտքի առանձին յերանգալո-
րումներն ընդուժելու հմտություն : Գեղարվեստական ընթերցա-
նության սկզբնական հմտություններ : Հրապարակով բարձրաձայն
կարգալուն նախապատրաստվելու հմտություն :

Ուսուցչի առաջարանքով կամ իր սեփական ընտրությամբ
լուս կարգալու և կարենոր տեղերը զբի առնելու հմտություն :

2. Գրքով աշխատելու ունակություններ . կարդացած գիրքը

ժամերի և գլուխների բաժանելու հմտություն : Կարողանալ կար-
դացած տեքստի հատվածի համար ինքնուրույն վերնա-
դիր դնել : Կարողանալ կարդացածը բաժանել մասերի, յուրա-
քանչյուր մասին վերնագիր դնել : Կազմել կարդացածի պլանը,
պատմվածքի մեջ գտնել գլխավոր և յերկրորդական եպիզոդները,
դտնել նրանց մեջ յեղած կապը : Գիտենալ, թե ո՞վքեր են գլխա-
վոր գործող անձերը և կազմել նրանց տարրական բնութագրու-
թյունները (նկարագրել նրանց արտաքինը, բնավորության գըլ-
խավոր գծերը. նշել, թե ինչ վերաբերմունք ունի հեղինակը
նրանց հանդեպ. հասկանալ, թե վոր դասակարգին են պատկա-
նում գլխավոր գործող անձերը) :

3. Կնդիր արած վոտանավորներն ու գեղարվեստական ար-
ձակ փոքրիկ հատվածներն արտահայտիչ կերպով արտասանելը և
կարդալը :

4. Զուրուց արտադասարանային ընթերցանության մասին՝
զրադարան հաճախելը, թեմատիկ գրացուցակներն ոգտագործելը,
միենույն թեմայի շուրջը տարբեր գրքեր կարդալը : Ուսուցչի
շուցումով ինքնուրույն կերպով գրքեր կարդալ՝ համառոտակի
գրի առնելով հարկավոր կամ հետաքրքիր կտորները :

Բանավոր և գրավոր խոսք

1. Եքսկուրսիայի, գրված փորձի, կատարած աշխատանքի
վերաբերյալ նախապատրաստվելու և հաղորդումով հանդես գա-
լու հմտություն :

2. Աշակերտական աշխատանքների շուցահանդեսի, դպրոցա-
կան տոնների, եքսկուրսիաների (գեղի հարեան դպրոցը, կոլտնտե-
սությունը, գործարանը և այլն) մասին զեկուցումով հանդես գա-
լու կարողություն :

3. Կարողանալ կատարած աշխատանքի մասին հաշվետվու-
թյուն կազմել, այսինքն՝ տալ նպատակը, պլանը, նյութերի ընտ-
րությունը, հետեւթյուններ և առաջարկներ անել :

4. Կարդացած գրքի գլխավոր միտքը պլանով հաղորդելու
հմտություն : Ինքնուրույն գրավոր կերպով վերապատմել կար-
դացածը :

5. Կարողանալ պատմողական բնույթի մատչելի թեմաների
շուրջն ինքնուրույն շարադրություն զրել՝ կապված զեղի բնու-
թյուն կամ արտադրություն կատարած եքսկուրսիաների հետ :
Այս աշխատանքները կատարելուց առաջ նախագիս այդ մասին
զրույց ունենալ, իսկ հետո բանավոր ամփոփել դասարանում :

6. Պատի լրագրին և պատի լրագրի աշխատանքի տարբեր ձեւներին մասնակցելը (գրել թղթակցություններ, նամակներ, լուսապատճեն և այլն):

7. Ստեղծագործական պատմվածք, սյուժեություն չարումակելու կամ տվյալ դեպքին նախորդածը պատմելու փորձեր: Ինքնուրույն ստեղծագործական պատմվածքի փորձեր (իր կյանքից, իրեն չըջապառող մարդկանց կյանքից, վորեւ հասարակական դեպքի, կամ բնության յերկույթի մասին և այլն): Կարդացածի բովանդակությունն ընդարձակ կամ համառոտ գրավոր շարադրել: Քերականական գրավոր վարժություններ կատարել, զանազան տիպի թերագրութուններ գրել:

8. Նկարներով աշխատանք. նկարները դիտել, պատմել և յերեմն գրի առնել նկարների բովանդակությունը: Նկարագրել՝ գեղարվեստական մանրամասնությունները հաղորդելով: Պատմել, թե ի՞նչ կարող եր նախորդել պատկերված դիպլաֆին, կամ ինչ կարող եր լինել նրա շարունակությունը: Պատմել մի այնպիսի դեպք, վոր նման և նկարի բովանդակությանը:

9. Բառապաշտի հարստացման աշխատանք. ծանոթություն վորչիներին, մակրիներին (եպիտետներին): Ուղղակի և փոխարերական իմաստով զործածվող բառեր: Այնպիսի բառերով նախադասություններ կազմել, վոր մի նախադասության մեջ բառը զործածվի բուն իմաստով, իսկ մյուս նախադասության մեջ փոխարերական իմաստով: Դիտողություններ լեզվական համեմատությունների վերաբերյալ: Քաղաքական, դիտա-տեխնիկական տերմիններ. նրանց նշանակությունը մեր լեզվի մեջ: Կարողանալ նկարագրել յերեխաներին ծանոթ դյուզատնտեսական մեքենաներ, գործիքներ:

10. Կարողանալ հեռագիր կազմել, գրել դրամական փոխադրագիր, գյուղխորհրդին կամ վորեւ հիմնարկության ուղղված պարզ դիմում, կազմել կարճ արձանագրություն և այլն:

11. Գեղարվեստական ձեռու վերապատմել դասատուի և աշակերտների պատմածը:

12. Գեղագրության պահանջների համաձայն գրել մեկ գծանի տետրակներում (տառերի միջին մասը 3 մմ, իսկ տառերի ամբողջ բարձրությունը՝ 11 մմ):

Քերականություն և ուղղագրություն

- Կրկնել 3-րդ դասարանում անցածը:
- Ծանոթություն ածականին:

3. Նախագասության մեջ գտնել այն բառերը, վորոնք փոխարինում են գոյականին. անձնական գերանուններ՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք:

4. Ստորոգյալն իրեւ յենթակայի գործողություն և գրություն ցույց տվող բառ. գաղափար բայի մասին: Բայի խոնարհումը, բայի դեմքը և թիվը: Յենթակայի գործողությունը կամ գրությունը ժամանակի կապակցությամբ՝ ներկա, անցյալ, ապանի: Բայի ժամանակը: Գաղափար բայի խոնարհման ժիւտական ձևերի մասին: Գաղափար բայի հրամայական ձևի մասին. գաղափար բայի անորոշ ձևի մասին:

5. Ծանոթություն թվականին:

6. Ծանոթություն մակբային:

7. Ծանոթություն կապերին:

8. Ծանոթություն շաղկապներին:

9. Ծանոթություն ձայնարկություններին:

10. Կոչական բառերը, նրանց նշանակությունն ու գործածությունը լեզվի մեջ:

11. Բառագիտություն. նույնանիշ, հականիշ, համանիշ և համանուն բառեր. գաղափար արմատի և ածանցի մասին. պարզ և ածանցավոր բառեր. նախածանցներ (ան, տ, գեր, արտ և այլն) և վերջածանցներ (ոտ, ուրյուն, եղին, յա, ստան, ոգ, ային, ական, որդ, իչ, ակ, իկ, յուն, ուն և այլն): Պարզ և բարդ բառեր. ահողակապը:

12. Հնչյունակիտություն. ու և ի ձայնավորի փոխվելը չգըրվող լե-ի (ջուր-ջրաղաց, կիր-կրաքար), կամ բոլորովին զեղչվելը (ամիս-ամսական, անասուն-անասնապահ):

13. Ուղղագրական վարժություններ ու թ, դ և լ, թ և գ, դ և թ, զ և չ, ձ և ց տառերի ուղղագրության շուրջը, և ձայնավորը բառամիջում:

14. Գրավոր աշխատանքների ժամանակ բառդրքույկից ոգտվելու վարժություն: Ուղղագրական բառատերը պահել, նշանակելով այնտեղ այն բառերը, վորոնց գրությունը գժվար ե:

ԳԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Գեղագրության պարագմունքներն առաջին դաստիառամ

1. Գրելու ժամանակ՝ ճանելու, մատները, դաստիարակը ձիւս շարժելու հիմնական ձևերն ու նշանակությունը

Գրել սովորեցնելու գործում գլխավորն այն է, վոր գրելու ժամանակ աշակերտը կանոնավոր նստի և տիրապետի մատներն ու դաստիարակը շարժելու տեխնիկային։ Մեր այբուբենի բոլոր տառերն եյապես շատ տարրեցից չեն բաղկացած։ Յեթե տառերի այդ տարրերն այն աստիճանն է յուրացրել աշակերտը, վոր այդ տարրերը կարող են գրել համարյա մեքենայորեն, ապա հենց դրանով նրա մեջ կանոնավոր գրելու ունակությունն ել և ամրապնդվում։ Դյուրընթեռնելի և գեղեցիկ գրելու գլխավոր հատկանիշներն են՝ ա) տառերի գծերի զուգահեռականությունը և բ) նրանց միջև յեղած տարածության միանմանությունը, տառերի հիմնական մասերի համաչափությունը, հավասար մեծությունը և այլն։ Այսպես գրելու հմտությունը ձեռք ե բերվում միայն մարմնի ճիշտ դիրքի և մատների ու դաստիարի համաշափ (ոիթ-միկ) շարժման հետևանքով։

2. Գրել սօվորեցնելու կանոները

Մինչև գրել սովորեցնելուն անցնելը՝ դաստիառն պետք է աշակերտներին բացատրի այն բոլոր տարրական կանոնները, վորոնք անհրաժեշտ են գրելու ժամանակ կիրառելու համար։ Այսինքն՝

ա) գրելու դասերին գրողի վոտքերն իրենց ներբանով պետք է ամուր հենված լինեն հատակին, կամ նստարանի ամրափայտին։

բ) իրանը պետք է պահել ուղիղ գրությամբ, իսկ կուրծքը չպետք ե կողցնել սեղանին (իրանը սեղանից 5 սմ հեռավորության վրա պետք է դունվի)։

շ) գլուխը պետք է աննշան թեքել դեպի սեղանը, վարպետը հնարավոր լինի գրածն աղատ կարդալ։ Պետք է այնպես նստել, վոր աչքերը տետրակից 25—30 սմ հեռավորության վրա դըմութեն։ Բացի այս, անհրաժեշտ է գլուխն ուղիղ պահել և աշակերտ կամ ներքեւ չթեքել։

դ) գրողի արմունկները չպետք է ամրողջությամբ լինեն սեղանի վրա, այլ պետք է շատ քիչ դուրս յեկած լինեն սեղանի յեղից և ձեռքի լայնության չափով հեռու՝ գրողի իրանից։

ե) գրիչը պետք է բռնել յերեք մատով՝ բթամատով, ցուցամատով և միջնամատով։ Բոլոր յերեք մատներն ել պետք ե լինեն թեթև կորացած և հանդիսավոր վիճակում և հողնածությունից խուսափելու նպատակով՝ գրիչը խիստ չպետք ե սեղմեն։

Ցուցամատը պետք է վերևից պառկած լինի գրչակոթի վրա, միջնամատը գրչակոթը պետք է պահի աջից, իսկ բութ մատը՝ ձախից։ Մյուս յերկու մատները ծառայելու յեն դաստիարակին վորպես հենարան և պետք է թեթև կերպով շփվեն թղթին ու հեշտությամբ սահեն նրա վրայով։ Գրչակոթի ծայրը պետք է լինի գրողի աջ ուսի դիմաց։

զ) տետրն այնպես է դրվում գրողի կրծքի կենտրոնի դիմաց, վոր նրա աջ անկյունն ալելի բարձր լինի ձախից։

3. Նախնական վարժությունների ենակները յեկ նրանց նշանակությունը գրելու կանոնավոր ենինիկա զարգացնելու ամար

Գրելու գործողությունը հետեւյալն է. տառերի գծերը գրվում են գրիչը բռնող մատները կուչ բերելու և ուղղելու միջացով։ տողը լրացվում է նախառութի և ճկույթի ու մատնեմատի վրա հենված դաստակի շարժումով, ձախից աջ։

Այս բոլոր շարժումները շատ պարզ են, սակայն յերեխաները դժվարությամբ են յուրացնում, մանավանդ, յերբ գրել սովորեցնելն անմիջապես սկսվում է տառեր գրելով։

Սրա պատճառն այն է, վոր յերեխաներն ստիպված են միանգամբ հաղթահարել մի քանի գժվարություն՝ հետեւ իրենց մարմնի դիրքին, տետրի դիրքին, գրչակոթը բռնելուն, մատների, դաստակի ու նախառութի աշխատանքներին և միկնույն ժամանակ գրել անծանոթ տառի ձեւ։ Նախնական վարժությունների գրությունը խոշոր չափով հեշտացնում է աշակերտի աշխատանքը և նպաստում կանոնավոր ու պարզ ձեռագրի ունակությունները չշակելուն (վարժությունների կարգը տես ծրագրում)։

Այս վարժությունները պետք ե կատարվեն հետեւյալ ձևով՝

ա) ուսուցիչը բացատրում ե վարժության բնույթը և նրա գրեթե՝ բ) ուսուցիչը ցույց ե տալիս մատների, դաստակի և նախառուսի այն հաջորդական շարժումները, վորոնք անհրաժեշտ են տվյալ տեսակի վարժության համար. դ) դրան հետեւում ե աշակերտների դանդաղ գրությունը՝ ձեռքի կանոնավոր շարժումները յուրացնելու համար. և ապա դ) գրության մեջ նկատված պահանջունների ուղղումն ուսուցչի կողմից:

Այսպիսի վարժությունները պետք ե կիրառվեն վոչ միայն դրելու յեղանակների սկզբնական ուսուցման ժամանակ, այլև առաջին դասարանի ընթացքում և յերկրորդ դասարանում։ Այս վարժությունները լավ մարզանք են մատների համար, կանոնավոր դրելուն վարժեցնելու համար։

4. Տառ յեվ բառ գրելը դասարանում

Տառերը և բառերը գրելը պետք ե անցնել այն հաջորդականությամբ, ինչպես վոր այն տրված ե դասագրքում։ Բայց վորուսպի տառի գծագիրը ճիշտ ստացվի, ուսուցիչը պետք ե չառ հանդամանորեն և ակնառու կերպով բացատրի աշակերտներին, թե ինչպես ե գրվում ուսումնասիրվող տառը, ի՞նչ մասնից ե բաղկացած, ի՞նչն ե առաջ գրվում, ի՞նչը հետո, վո՞րտեղից պետք ե սկսել, վո՞րտեղ վերջացնել, ի՞նչպես միացնել տառի մի գիծը մյուսի հետ, ի՞նչպես միացնել մի տառը մյուսի հետ և այլն։ Բացատրելով տառի գծագրի առանձին տարրերը, ապա տառերն ու բառերը գրելու ձեռքը, ուսուցիչը պետք ե այս ամենը խոչըր, հստակ և գեղեցիկ գրի գրատախտակի վրա կալմով։

Բերում ենք տառեր ու բառեր գրել սովորեցնելու մի որինակելի պլան։ ա) դասատուն գրատախտակի վրա գրում ե այն բառը, վոր պետք ե գրել սովորեցնի. բ) բաժանում ե այդ բառը տառերի և գրում ե գրատախտակին այդ տառերը. դ) յուրաքանչյուր տառ բաժանում ե բաղկացուցիչ տարրերի և գրում ե գրատախտակին այդ տարրերը. դ) առանձնացնում ե այն տարրերն ու տառերը, վորոնց գրելն աշակերտները դեռ չեն սովորել. ե) աշակերտները հաջորդաբար վարժվում են այդ տարրերը և տառերը գրելուն։ Ուսուցիչը բացատրում ե, վոր տառի հիմնական գծերը պետք ե գրվեն թեք գծերի վրա։ Յերեխաները դրում են տառերի տարրերը և առանձին բառերը, դասատուն անհատական սխալներն ուղղում ե տետրում։ Ուղղումից հետո յերեխաները մի տող ել են գրում։

Տառի առանձին տարրերը և առանձին տառերը գրելը չպետք

է չառ տեսի, միջին հաշվով յուրաքանչյուր վարժություն Յ տողից ավելի չպիտի լինի։ Հետադայում, դրելու ունակությունների ամրացման զուգընթաց, այդպիսի վարժությունների քանակը պետք ե այնպես կրծատվի, վոր անմիջապես հնարավոր լինի անցնել բառը դրելուն։

Սկզբում տառի և բառի տարրերն աշակերտները պետք ե գրեն գանդաղ, իսկ հետո, այդ տարրերի կանոնավոր գծագրը յուրացվելու և դրելու յեղանակներն ամրապնդվելու համեմատ, կարելի յե գրել՝ աստիճանաբար արագացնելով դրելու տեմպը։

Գեղագրության պարապմունքները յերկրորդ դասարանում

Յերկրորդ դասարանում զեղագրության առաջին և հիմնական նպատակն ե՝ աշակերտներին սովորեցնել կանոնավոր դրել մեծատառերը, ամրապնդել առաջին դասարանում ձեռք բերած կանոնավոր դրելու ունակությունները և զբաղվել ընդունված գծագրից կատարած անհատական չեղումները վերացնելով, վորոնք խանդարում են ձեռագրի պարզությանն ու հասակությանը և դրժվարացնում կարգալը։ Կարող են լինել հետևյալ չեղումները. ա) տառերի հիմնական գծերը չառ թույլ սեղմելը կամ չափից ավելի ուժեղ սեղմելը. բ) անհամաչափ սեղմելը (գծերը հետզետե հաստացնելը միջին մասում և ծայրերում). դ) հիմնական գծերի միջն յեղած հեռավորությունների անհամաչափությունը. դ) չառ սեղմգած՝ խիս կամ չառ ցրված՝ լայն-լայն գիր. ե) մի շարք տառերի չփոթելը և իրար նմանեցնելը, որինակ՝ ու և ու փ և ա, ու, ս և ա, ի և թ, զ և դ, չ և դ, մեծատառ Զ, Զ Զ տառերը և այլն. դ) այնպիսի ավելորդ գծիկների ու մագաղերի առկայություն, վորոնք բարդացնում են բառի կանոնավոր և իսկական պատկերն ու գժվարացնում կարգալը. է) գծերի տարրեր չափի թեքությունը կամ հակառակ կողմ թեքելը։

Գեղագրության պարապմունքները պետք ե սկսել նախնական վարժություններից, ապա, համաձայն նյութի, անցնել ծրագրում ընդունված դասավորությանը (հեշտից գժվարը), անցնել տառերի տարրեր, տառերը և բառերը գրելու կրկնությանը։

Գեղագրության դասերին այնպիսի բառերի ընտրություն պետք ե կատարել, վոր նրանց տառերն ունենան այն տարրերը, վորոնց վարժությունները ծրագրված ե անցնել տվյալ մաժենտիքն։

Վորպես ընդհանուր կանոն՝ սկզբում աշակերտները գրում են գանդաղ, իսկ հետո, տառերի տարրերը և բառերը

գծագրելը յուրացնելու համեմատ, դրելու տեմպը հետզհետե առաջացվում է:

Ամբողջ այբուբենի մեծատառերի և փոքրատառերի գրությունը յուրացնելուց հետո անցնում են նախաղասությունները, փոքրիկ հատվածները կապակցված դրելուն, պարտադիր կերպով կիրառելով ուղղագրության բոլոր կանոնները:

Գեղագրությունը 3-րդ և 4-րդ դասարաններում

Գեղագրությունն այս դասարաններում պետք է սովորեցնի բառի գրությունն անընդհատ շարժումով (կից զրություն)։ դրա համար հանձնարարվում է վորոշ փոքրատառերի և մեծատառերի յերկտակ դրություն, վորի նպատակն է զարդացնել արագագրությունը։ Դասատուն պետք է հետեւ աշակերտի դրելուն, մատնացույց անի նրա ձեռագրի մեջ նկատած թերությունները և ուղղի։ 3-րդ և 4-րդ դասարաններում աշակերտների ձեռագրի բնորոշ սիսակներն են՝ թեքելը դեպի ձախ կողմը և տառերի վոչ հավասար բարձրությունը։ Ուսուցիչը պետք է հետեւ, վոր աշակերտների ձեռագիրը չվարականա, վոր յերկրորդ և չորրորդ դասարաններում տառերի միջին մասի մեծությունը լինի 3 մմ վոչ պակաս, սղահղանելով տառերի միանման բարձրություն և 75 աստիճան թեքություն դեպի աջ:


Մ Բ Ա Գ Ի Ւ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՐԱՆ

1. Գրելու սկզբնական ձևեր՝ 75 աստիճան թեքությամբ (տես այլբենարանի ձեռադիրը):

2. Գրելու ժամանակ կանոնավոր նոտելու, տետրը սեղանի վրա ճիշտ դնելու և զրչակոթին ու մատիտին ճիշտ տիրապետելու ունակությունները։ Իրանի, ձեռքերի, վոտքերի, մատների ճիշտ դիրք, ինչպես և թանաքի, ծծողականի կանոնավոր դործածություն։

3. Նախնական վարժություններ։ մատները, ձեռքերը և աչքաչպիլ զարդացնելու համար աղեղաձև դժերի գրություն թեթև, բարակ գծիկներով ձախից աջ, ինչպես և այս ու այն կողմը՝ նախառուը զարդացնելու համար։ բթամատը, ցուցամատը և միջնամատը կուչ ըերել և ուղղել։ բարակ գծերի գրության վարժություն՝ միայն մատների ողնությամբ, առանց դաստակը շարժելու։ նույնը՝ հավասար սեղմումով։ ձվաձև գծերի գրություն այլից ձախ, ձախից աջ, ուղղաձիգ և պառկած դիրքով, սկզբում առանց սեղմելու, ապա՝ սեղմելով (տես նկար 1)։







Նկ. 1

Վերոհիշյալ վարժությունները կատարվում են նաև նկարչության դասերին։

4. Տառերի և բվանշաների գծագրերի ուսումնասիրություն։ Տառերի հիմնական տարրերը՝ ուղիղ դիմ, ուղիղ դիմ՝ բոլորքը դեպի վեր, ուղիղ դիմ՝ բոլորքը դեպի ցած, ուղիղ դիմ՝ բոլորքը դեպի վեր և դեպի ցած։ վահագիծ՝ ձախից աջ, աջից ձախ։

Տառերի լրացուցիչ տարրեր, հանդույց, ալիքաձև ու ձվաձև գծեր, թվանշաններ (տես նկար 2):



Նկ. 2

5. Փոքրատառերի առաջին խումբ՝ այս խմբի տառերն ունեն ուղիղ դժեր՝ բոլորքը դեպի վեր, ուղիղ դիմ՝ բոլորքը դեպի ցած, ուղիղ դիմ՝ բոլորքը դեպի վեր և դեպի ցած:

(ա, զ, ը, ի, լ, իւ, կ, հ, ղ, մ, ն, ա, շ, ո, պ, ս, փ, ց, ր, փ):

Փոքրատառերի յերկրորդ խումբ՝ այս խմբի տառերն ունեն նույն հիմնական տարրերը՝ լրացուցիչ գծային մասնիկներով:

Բ, Շ, Լ, Խ, Ն, Ռ

Փոքրատառերի յերրորդ խումբ՝ այս խմբի տառերն ունեն հանդույցներ և ձվաձև դժիկներ վերևում կամ ներքեւում:

Բ, Ժ, Շ, Գ, Ժ, Կ, Փ

Փոքրատառերի չորրորդ խումբ՝ այս խմբի տառերն ունեն տարրեր տարրեր:

Ջ, Չ, Ֆ, Է, Փ

Ձեռագիր փոքրատառեր՝ չորս դժի վրա:

Ա Ր Գ Դ Ե Կ Ո Ռ Ժ Ւ Խ Ը

Հ Յ Շ Ե Վ Ճ Ա Ղ Վ Ա Գ Ո Ա Մ

Կ Պ Կ Ա Խ Վ Ժ Ւ Ժ Վ Ո Վ Ա Ր

Նկ. 3

Ձեռագիր մեծատառեր՝ չորս դժի վրա:

Ա Ր Գ Դ Ե Կ Ո Ռ Ժ Ւ Խ Ը

Հ Յ Շ Ե Վ Ճ Ա Ղ Վ Ա Գ Ո Ա Մ

Կ Պ Կ Ա Խ Վ Ժ Ւ Ժ Վ Ո Վ Ա Ր

Նկ. 4

6. Մեծատառերի առաջին խումբ. այս խմբի մեծատառերը վոքատառերից քիչ են տարբերվում:

(P, Q, R, S, L, P, D, H, Y, H, Y, H, S, U, N, N, .

$\psi, q, n, u, y, p, y, \varphi, \phi$):

Մեծատառերի յերկրորդ խոսմք. այս լսմբի մեծատառերը փոքրատառերից տարբեր են գրիվում:

(u. 2. 2. 3. I. 2. u. p.)

Գեղագրության համար առաջին դասարանում հայոց լեզվի ժամերից հատկացվում ե վեցորյակում (կամ յոթնորյակում) մեկ ժամ։ Առաջին կիսամյակում, վեցորյակում (յոթնորյակում) 3—4 անդամ, ըստ վորում 10-ական բովեա առաջին քառորդում և 15-ական բովեա՝ յերկրորդ քառորդում։ Գեղագրության պարագմունքները պետք ե կապվեն այբբենարանով տարիվող պարագմունքներին։ Եթե կրորդ կիսամյակում գեղագրությանը հայոց լեզվի դասսերից վեցորյակում (յոթնորյակում) հատկացվում ե յերկու պարագմունք, ամեն անդամ արամագրելով հայոց լեզվի դասի կեսը (20—25 ր.)։

ՅԵՐԿՐՈՐԴ դասարան

Ամրապնդել զրելու ժամանակ կանոնավոր նստելու, տեսրը կանոնավոր բոնելու, դրչակոթին ու մատիտին տիրապետելու, թանաքն ու ծծողականը կանոնավոր գործածելու ունակությունները:

1. Ավելի արագ գրելը 75 աստիճան թէքությամբ, չորս
տողանի (միջին մասը 4 մմ) տետրում։ Անցնել կից գրության
պարզ ձևերի վարժություններ։ Ուզզել նստելու և դրիչը բանելու
պահառությունները։

2. Ուսուցման առաջին տարիվա վարժությունների կրկնություն։ Անընդհատ շարժումով ուղղանկյուն դժելու վարժություն՝ ձեռքի մատերն ու ամրող գասակը զարգացնելու նպատակով։ Հանգույզախոր և ձիաձև դժեր։

3. Փոքրատառեր գրելը (առաջին դասարանի նյութի կրկնություն) :

4. Մեծատառեր դրելը:

Մեծատառերի առաջին խումբը՝ այս խմբի մեծատառերն ունեն ուղիղ գծեր և վերևում կամ ներքևում բոլորքներ :

($u_0, p_0, \eta_0, \tilde{u}_L, \tilde{p}_L, \mu_0, y_0, h_0, \eta_0, u^0, n_0, \bar{n}_0, \bar{y}_0, \bar{n}_0, \bar{u}_0$,
 $y_0, \bar{u}_0, p_0, \bar{\eta}_0$):

Մեծատառիրի յերկրորդ խումբը. այս խմբի մեծատառերն ունեն հանդուլուներ, ձվաձև մասեր կամ վերջավորություններ:

($q, 2, p, \vartheta, \vartheta, 2, b, 3, z, q, y, p, \phi$):

5. Գրի պարզությունն ու դյուքընթեսնելիությունը խանդառող անհատական չեղումների ու թերությունների վերացում՝ առանձին աշակերտաների հատուկ վարժություններ տալու միջոցով (առանձին ամբողջական բառերի, վանկերի, տառերի կամ նրանց տարրերի արտադրություն):

Գեղագրությանը յերկրորդ դասարանում Հայոց լեզվի ժամերից Հատկացվում է վեցորյակում (յոթերորյակում) մեկ ժամ՝ յուրաքանչյուր պարապմունքի Համար ամեն անդամ տրամադրեալու հատուեամբի դասի կեսը (20—25 բուգի):

Յեսուս կ տպառք դասարանից

Այս դասարաններից մեկնումէ կում հայոց լեզվի դասերից գեղագրությանը հատկացվում է վեցորյակում (յոթնորյակում) 1-ական ժամ 2 պարապմունքի համար, ամեն անգամ տրամադրությունը հատու լեզվի ժամի կեսը (20—25 բուգե):

Փոքրաստաների ու մեծաստաների ձեռագիր որինակներ՝ վո-
դու տառերի յերկտակ գրությամբ:

Փոքրաստաներ

արցող է կը բժիշխամ
կիշու մազուսպոսի
պրումի ժիշե

Ակ. 5.

Մեծաստաներ

Արցող է լրջախամ
չի շահ մազուսի
պառակ արցունիքի ժ

Ակ. 6

ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԱՐԵԱԴԱՍՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐ-
ՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆԿՐԱԺԵՑ ԳՐԱԿԱՆ ՅԵՐԿԵՐ

Ներածական դիտողություններ

Մեծ և գեղարվեստական գրականության դերն աճող սերնդի դաստիարակության դորձում:

Բանաստեղծությունների և պատմվածքների ընթերցանությունը, գեղարվեստական արձակի վերապատճենն ու անգիր անելլայս ամենը պետք է ընդլայնի յերեխանների մտահորիզոնը, հարստացնի նրանց հուզական կյանքը, ապրումները, մի շարք կոնկրետ պատկերներ տա թե անցյալ և թե ժամանակակից կյանքից:

3-րդ և 4-րդ դասարանների ծրագրի ուսումնասիրության արդյունքը պետք է լինի այն, վոր աշակերտները յուրացնեն գրական գրադիտության հետեւյալ տարրերը.

1. Հասկանալ գեղարվեստական յերկի տեքստը, նրա գաղափարական և գեղարվեստական նշանակությունը:

2. Կարողանալ տարրերել գեղարվեստական յերկերի մի շարք տեսակները (պատմվածք, վոտանալիոր, առակ, հեքիաթ):

3. Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունների տարրական յուրացում. մակդիրներ, համեմատություններ, փոխարերական բառեր, ոիթմանց առանց տերմինների:

4. Տարրական պատկերացում գրվածքի գլամուր դորձող անձերի դասակարգային-սոցիալական պատկանելության վերաբերյալ:

Մրագրով նախատեսնված գրական յերկերի ընթերցանությունը սերտ կապ է ստեղծում պատմության, լեզվի, բնագիտության, աշխարհագրության և այլ գիտությունների միջև, ուժեղ միջոց հանդիսանալով յերեխանների գեղարվեստական դաստիարակության համար, բազմակողմանի հարուստ գիտելիքներ տալով բնության ու հասարակական կյանքի մասին:

Գրական յերկերի ընթերցանության և լեզվի, բնագիտության

ու մյուս առարկաների միջև յեղած կապն արտահայտվում է հետեւյալում։

Լեզվի հետ այդ կապն արտահայտվում է նրանում, վոր ընթերցանության համար ընտրված յերկերն իրենց պատկերավոր լեզվով հարուստ նյութ են տալիս բանավոր ու գրավոր խոսքի դարձացման, ինչպես նաև լեզվի ուսուցման մյուս աշխատանքների համար։

Պատմության հետ գեղարվեստական յերկերի ընթերցանության կապն արտահայտվում է նրանում, վոր ընտրված յերկերում արտացոլված են հասարակական կյանքի անցյալի և ներկայի առանձին փաստեր ու դեպքեր (որինակ՝ գյուղացիների և կալվածատերերի կյանքը, նրանց փոխարարերությունը, կենցաղն ու բարքերը ճորտատիրական խոալունքի գարագրանում և այլն), առանձնապես բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական պայքարից առանձին դեպքեր ու մոմենտներ, բանվոր դասակարգի առաջնորդների կյանքն ու գործունեյությունը, մեր հերոսների կյանքն ու պայքարը, սոցիալիստական շինարարության ու կյանքի պատկերներ, սոցիալիստական վերաբերմունքը դեպի աշխատանքը, խորհրդային հայրենասիրություն և այլն, և այլն։

Բնագիտության և աշխարհագրության հետ այդ կապն արտահայտվում է նրանում, վոր ընթերցանության համար նախատեսնված դրվերն ողնում են աշակերտներին ավելի վառ, ավելի հուզականորեն ըմբռնելու և ճանաչելու բնությունը, նրա յերեվույթները, կենդանական և բուսական աշխարհը, դիտական հայտնագործություններ, ճանապարհորդություններ և այլն։


Յերբորդ և չորրորդ դասարանների աշակերտների համար ընթերցանության նյութեր ընտրելիս պետք է զեկավարվել հետևյալ սկզբունքներով։

1. Յերկի գեղարվեստական նշանակությունը։

2. Տվյալ դասարանի աշակերտների հետաքրքրությունը և նրանց գիտելիքների մակարդակը, ինչպես նաև բովանդակության մոտիկությունը տվյալ հասակի յերեխաներին (ի թիվս այլ յերկերի՝ ընթերցանության համար այնպիսի յերկերի ընտրություն, վարոնց մեջ գործող անձինք յերեխաներն են)։

Բացի ծրագրում նշված յերկերից, անհրաժեշտ է ընթերցանության համար նկատի ունենալ և հանձնարարել յերեխաներին կարդալու նրանց համար մատչելի այժմեականության թիմատիկայով այլ գեղարվեստական նյութեր (պատմվածքներ ու բանաս-

տեղծություններ), վորոնք վերաբերում են Խորհրդային յերկրի կյանքին ու բնությանը, մեր հայրենիքի հերոսների, անվանի մարդկանց կյանքին ու դործերին, ինչպես նաև կազիռալիստական յերկերների աշխատավարների յերեխաների գրությանը, նրանց հեղափոխական պայքարին։ 1-ին դասարանից իսկ պետք ե ուղարկողները «Հակոբեմբերիկ» ամսագիրը, 3-րդ դասարանից՝ «Պիոներ կանչը»։



Զելսն. Խմբ. Հր. Կոքոյան
Ռըպագրէց Ա. Տ.-Մկրտչյան

Հանձնված ե արտադրության 11/VIII 1937 թ.

Սառագրված ե տպագրելու 27/VIII 1937 թ.

Դլավլիանի լիազոր Պ— 4192, հրատ. Խ 3748, պատվեր Խ 176,
2¹/₂ տպ. մամուլ. մեկ տպ. մամուլում 40.000 տպ. նշ., արդյաճ 4000

Հայկական տպարան, Ենթան, Ալավերդյան Խ 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0977606

407

ԳԻԱԸ 1 Ր.

11
28551

2 СЕН. 1937

30

ПРОГРАММЫ
НАЧАЛЬНЫХ ШКОЛ
АРМЯНСКИЙ ЯЗЫК
(для армянских школ)
I—IV классы

Тип Армянской ССР. Ереван. 1937